**21.11.23 - 21.11.23**
11:00
**Անցանց**
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ Պալեանների անվան դահլիճ

Նատոլինի Եվրոպական քոլեջը (College of Europe in Natolin) առաջարկում է եվրոպական ուսումնասիրությունների միջառարկայական մագիստրոսական ծրագիր՝ ամբողջական կրթաթոշակի տրամադրմամբ։

**Ս.թ. նոյեմբերի 21-ին՝ ժամը 11:00-ին, ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում** տեղի կունենա այս աննախադեպ ծրագրի ու կրթաթոշակային փաթեթների վերաբերյալ տեղեկատվական հանդիպում ԵՊՀ և Եվրոպայի քոլեջի շրջանավարտ, Նատոլինի Եվրոպական քոլեջի հաղորդակցման մասնագետ և Վարշավայի եվրո-ատլանտիկ ամառային ակադեմիայի (WEASA - Warsaw Euro-Atlantic Summer Academy) համակարգող Տաթևիկ Հովհաննիսյանի հետ։

Հանդիպման շրջանակում կներկայացվի ակադեմիական ծրագիրը, որը ներառում է՝

- մեկշաբաթյա 2 ուսումնական այց տարբեր տարածաշրջաններ,
- լեզուների ամառային ակադեմիա,
- լեզուների հավելյալ ուսուցման հնարավորություն (արաբերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, լեհերեն, ռուսերեն, ուկրաիներեն և իսպաներեն),
- մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հանդիպումներ,
- մասնագիտական զարգացման թրեյնինգներ։

Առաջարկվող երկլեզու մագիստրոսական ծրագիրը համարվում է եվրոպական ուսումնասիրությունների ամենաընդգրկուն միջառարկայական ծրագրերից մեկը Եվրոպայում։

Քոլեջն առաջարկում է կրթաթոշակային տարբեր փաթեթներ ՀՀ քաղաքացիների համար՝ Եվրոպական հարևանության քաղաքականության կրթաթոշակներ, Եվրոպայի պատմության ու քաղաքակրթության կրթաթոշակներ, լրագրության ու մեդիայի կրթաթոշակներ։

Բացի դրանից՝ Նատոլինում տրամադրվում է հավելյալ ամբողջական EU4Youth կրթաթոշակ Արևելյան գործընկերության երկրների, այդ թվում՝ Հայաստանի ուսանողներին ու երիտասարդներին։

Բացի որակյալ կրթությունից՝ քոլեջը տալիս է ինքնադրսևորվելու բազմաթիվ հնարավորություններ (կոնֆերանսների, սիմուլյացիոն խաղերի, տարբեր նախաձեռնությունների մասնակցելու միջոցով)։

Նատոլինի ակադեմիական միջավայրին ծանոթանալու համար անհրաժեշտ է անցնել հետևյալ հղումով՝ https://youtu.be/uB5sPdU8Z8M?si=bODKh0scaqE1fz8V:

Ստորև՝ ուսանողական կյանքը պատկերող հատվածներ.

ուսումնական այցեր՝ https://youtu.be/ykSsDD7DyH8?si=3OyIMWE6yn1LhyGj,

ազգային օրեր՝ https://youtu.be/Sd5qVCa1cTI?si=KhXxHlhiCz56oH8o,

ավարտական շաբաթ՝ https://youtu.be/_TyIpMG4dAA?si=XeJ4cmCYus0tQc1f:

Կրթական ծրագրի վերաբերյալ այլ մանրամասներ հասանելի են անգլերենով՝ https://www.coleurope.eu/natolin

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am